ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Քաղաք ***21.10. 2015 թ. ժամը 11.00***

Նախագահում էր մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 84-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ավետիք Դարբինյանը:

Օրակարգում՝

1. 2015 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2015 թվականի բերքահավաքի արդյունքների ամփոփման մասին:
   /Զեկ. Վանիկ Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

3. Այլ հարցեր:

Հայտարարություններով հանդես եկան՝

Դերենիկ Հովհաննիսյանը - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Յուրա Մուշեղյանը - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. **Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝**

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ՝ համապատասխան ցուցանիշներն ապահովելու համար.

2) 2014-2015 թվականներին մարզի համայնքներին հատկացված առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացուի և պարարտանյութի գումարների պարտքերը մարել մինչև ս/թ. նոյեմբերի 1-ը:

2. **Առաջարկել մարզի Գեղամասար համայնքի ղեկավարին՝** աշխատանքներ տանել աշխատավարձերի գծով նախորդ տարիների կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից 2015 թվականի հաստատված պլան-ժամանակացույցին համապատասխան:

3. **Մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանին, մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Իվան Ասատրյանին և ֆինանսական ու սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Յուրա Մուշեղյանին՝** մարզի տարածաշրջաններում համայնքների ղեկավարների մասնակցությամբ հրավիրել խորհրդակցություններ՝ քննարկելու համար մարզի համայնքների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ, տեղական տուրքեր և այլն/ հավաքագրման ցուցանիշների ապահովման հարցը:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ